ՀԱՐԱԿՑԱԿԱՆ* ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԼԻԶԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Վերջին տասնամյակներում հարակցական կապակցությունը լայն ուշադրության առարկա է դարձել քերականագիտության մեջ։ Սակայն, ինչպես ճիշտ նկատել են մի շարք հետազոտողներ[1], *այն դեռևս մնում է լիովին չուսումնասիրված*[2]։

Սկսած 60-ական թվականներից՝ հարակցությունը, որպես շարահյուսական միավորների իմաստային հարաբերության տեսակ, ճանաչվեց նաև հայ քերականագիտության մեջ՝ դրվելով «հարակցական հարաբերություն» (Վ. Առաքելյան, Ն. Պառնասյան, Գ. Գարեգինյան) և «հավելական հարաբերություն» (Գ. Ջահուկյան, Ս. Աբրահամյան) անունների տակ[3]։

Ինչպես հայտնի է, Մ. Աբեղյանը հավելական է համարել միավորիչ շաղկապներով գրեթե բոլոր կապակցությունները[4]։ *Մեր կարծիքով, հարակցական կապակցությունը պետք է զատել ոչ միայն իմաստային այլ հարաբերություններ ունեցող կապակցություններից, այլև բուն հավելական կապակցությունից։ Ճիշտ է, այս երկու կարգի կապակցությունների համար էլ ելակետային*

---

* «Հարակցական» տերմինն օգտագործում ենք ոչ այն իմաստով, ինչպես օգտագործված է Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974) գրքում՝ հարակցական սերող կաղապարի (аппликативная порождающая модель) հասկացության մասին խոսելիս, այլ իբրև ռուսերենի «присоединительный» տերմինին համանիշ։

1 Н. С. Валгина, Д. Э. Розенталь, М. И. Фомина, В. В. Цапукевич, Современный русский язык, М., 1964.

2 Հարակցությունը, իբրև բարդ նախադասության բաղադրիչների իմաստային հարաբերության տեսակ, մատնանշել են դեռևս Լ. Վ. Շչերբան և Վ. Վ. Վինոգրադովը։ Հետագայում այն ներկայացվել է ակադեմիական քերականության երկրորդ հատորում (1954), ինչպես նաև Մոսկվայի համալսարանի հրատարակած «Современный русский язык» (1964), Ա. Գվոզդևի «Современный литературный язык» (1968) բուհական ձեռնարկներում և այլուր։ Л. В. Щерба, О частях речи в русском языке (сб. «Русская речь», 11, М., 1928; В. В. Виноградов, Русский язык, М., 1947).

3 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964, Ն. Պառնասյան, Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում («Լեզվի և ոճի հարցեր», հ. 2, Երևան, 1964)։ Այստեղ հեղինակը համակողմանիորեն քննել է հարակցական կապակցությունը միայն անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններում, Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963։ Գ. Ջահուկյանը նշված աշխատության «Համադասական կապակցություն» ենթաբաժնում տարբերակում է շաղկապների երեք հիմնական տիպ, որոնցից առաջինի՝ հավելականի, մեջ պետք է ենթադրել նաև հարակցական իմաստը։ Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969։

4 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 654, և հետ.։

նշանակություն ունեցող միտքը հաղորդվում է առաջին միավորով, և երկրորդի միտքը «հյուսվում է» լոկ առաջինի «հենքի վրա», սակայն դրանց միջև կա էական տարբերություն։ Հավելականի դեպքում երկրորդ միավորով հաղորդվող միտքը առաջինի նկատմամբ բառիս բուն իմաստով հավելական նշանակություն ունի՝ իր առավել (կամ պակաս) արժեքով, և ավելանում (գումարվում) է նրա վրա իբրև նույնանմման միտք. այստեղ միավորները ծավալով գրեթե միշտ հավասար են լինում։ Օրինակ՝ «Շարմաղ բիբին անընդհատ լալիս էր, լաց էր լինում և Շողերը» (ԱԲ, էջ 248)։ «Հուզմունքից դողում էր ձյունի պես ճերմակ նրա մորուքը, դողում էին նաև ջլուտ ու ցամաքած ձեռքերը» (ՍԽ, էջ 105)։ «Միայն գլխավերևում խոշոր աստղերն էին թրթռացնում իրենց թարթիչները խավար գիշերներին, մեկ էլ փարոսի կապուտակ լույսն էր բարակ սյան նման ձգվում ուղիղ դեպի վեր» (ԿՊ, էջ 122)։ Հարակցական կապակցության դեպքում երկրորդ միավորով հաղորդվողը միայն կողմնակի՝ հարակից միտք է. այն կցորդվում է առաջինին, իբրև նրա հետ ինչ-որ կերպ առնչվող միտք։ Այս է պատճառը, որ հարակցվող միավորը իր շարահյուսական դերով հաճախ մոտենում է միջանկյալ նախադասությանը։ Հարակցական կապակցության բաղադրիչների ծավալը հավասար չէ։

Հարակցական է բարդ համադասական նախադասության բաղադրիչների այնպիսի կապակցությունը, որի դեպքում կապակցվող միավորներից երկրորդով հաղորդվում է առաջին միավորով ներկայացվող ողջ մտքի կամ նրա որևէ անդամով դրսևորված առարկայի, երևույթի, գործողության, եղելության հետ այս կամ այն կերպ առնչվող հարակից միտք կամ տրվում է լրացուցիչ, պարզաբանող տեղեկություն նրանց վերաբերյալ։

Հարակցվող միավորով սովորաբար հաղորդվում է խոսելու պահին առաջացած, հանկարծահաս միտք։ Այդ իսկ պատճառով բաղադրիչների իմաստային այդպիսի հարաբերությամբ բարդ նախադասությունն ավելի շատ հատուկ է բանավոր խոսքին։ Բայց այն բավականաչափ գործածական է նաև գրավոր խոսքում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ՝ երկխոսություններում։ Հարակցական կապակցություններ պատահում են նաև գիտական, հրապարակախոսական երկերում ու հոդվածներում։

Այս կապակցությունն իրացվում է և (ու), իսկ (մինչդեռ), բայց (սակայն) և այլ շաղկապներով, ինչպես նաև՝ շարահարությամբ; վերջինիս քննությունը, սակայն, սույն հոդվածի նպատակից դուրս է։

Քննենք տարբեր շաղկապներով կապակցություններն առանձին-առանձին։

Եվ շաղկապով հարակցական կապակցություն—Միավորներն և շաղկապով հարակցական կապակցությամբ բարդ համադասական նախադասության առաջին բաղադրիչով հաղորդվում է հիմնական միտքը, իսկ երկրորդով՝ նրան հարակից, նրա միտքը կամ որևէ անդամը լրացնող, պարզաբանող մեկ այլ միտք՝ այլևայլ երբերանգներով, որոնց բոլորի մեջ էլ առավել կամ պակաս չափով առկա է այդ շաղկապին հատուկ գումարման գաղափարը։ Խոսողի նպատակն է հաղորդել առաջին միավորի միտքը (երբեմն նպատակ չունենալով հաղորդել նաև երկրորդի միտքը) և առանց նրանից կտրվելու՝ անցնում է մեկ այլ, հանկարծահաս մտքի, որը թեև առաջին միավորի բովանդակության զուգահեռ «կշիռ» չունի, բայց որևէ կերպ առնչվում է այդ միավորի (կամ նրա անդամներից մեկի) հետ, ինչպես՝ «XX դարը արագ և խոր-

փոփոխությունների դար է մարդկության կյանքում, և դա առիթ է տվել այն անվանել ամենատարբեր անուններով»[5] (Հ, էջ 3)։

Հարակցումը կարող է լինել տարբեր նպատակներով, որից էլ բխում են կապակցվող միավորների իմաստային հարաբերությունների տարբերություններն ու նրբերանգները։

ԵՎ շաղկապով հարակցական կապակցությունները լինում են՝

ա) Հարակցա-բնութագրական[6]—ԵՎ շաղկապով հարակցվող միավորը առաջինի նկատմամբ ունենում է բնութագրող նշանակություն, երբ բարդ համադասական նախադասության երկրորդ միավորով պարզաբանվում, բնութագրվում, հատկանշվում է այն առարկան, որի մասին խոսվել է առաջին միավորում։ ԵՎ շաղկապից անմիջապես հետո դրվում է մի ցուցական դերանուն, որն ակնարկում է պարզաբանվող առարկան։ Այդ առարկայի անունը կա՛մ այլևս չի կրկնվում երկրորդ միավորում, և նրա փոխարեն դրվում է ցուցական դերանունը, կա՛մ կրկնվում է՝ ստանալով այդ դերանուն որոշիչը։ Հաճախ առաջին միավորում բնութագրվելիք առարկան դրսևորող անդամն ստանում է մի որոշիչը, որը, տրամաբանական շեշտը կրելով իր վրա, կազմում է տվյալ միավորի հնչերանգային բարձրակետը, իրենով ազդարարում է գալիք բացատրությունը և դրանո՛վ իսկ կատարում կապակցական որոշ դեր։ Օրինակ՝ «...Պատկերավոր ասած, չնայած XX դարի այդ բոլոր բազմաթիվ «անուններին», նա միայն մի ազգանուն ունի, և այդ ազգանունն է կոմունիզմ» (Հ, էջ 4)։ «Բարությունն ու միամտությունը կաթում էր նրա փափուկ դեմքի ամեն մի խորշոմից, և այդ դեմքը մի տեսակ բութ-պայծառ արտահայտություն ուներ» (ՆԴ, 3, էջ 7)։ «Ահա բացվում է կոլխոզային կյանքի առօրյան, և Լենինն է այդ առօրյայի կենտրոնական զսպանակը» (ՆՉ, էջ 188)։ «Վայրի թռչունները ֆերմայում սկսել էին ձու ածել, և դա նրանց առաջին պտուղն էր» (ՍԱ, էջ 262)։

Երբեմն միայն՝ նման բարդ համադասական նախադասությունների (հարակցա-բնութագրական կապակցությամբ) երկրորդ բաղադրիչում կրկնվում է առարկայի անունը՝ առանց ցուցական որոշչի։ Օրինակ՝ «Գարուն է, և գարունն ավելի է գեղեցկացնում Արարատյան դաշտը» (ՂՀԼ, էջ 131)։

բ) Լրացուցիչ տեղեկության—Բարդ համադասական նախադասության առաջին բաղադրիչում խոսվում է մի բանի (առարկայի, երևույթի, գործողության, եղելության) մասին, երկրորդ՝ հարակցվող բաղադրիչով որևէ լրացուցիչ տեղեկություն է տրվում նրա վերաբերյալ։

Այս կարգի բարդ նախադասության երկրորդ միավորում նույնպես կարելի է օգտագործել ցուցական դերանուն, բայց վերջինս նույն դերը չի ունենա, ինչ որ հարակցա-բնութագրական կապակցության ժամանակ. այն մատնացույց է անում ոչ թե առարկա, որի մասին խոսվում է տվյալ բարդ համադասական նախադասության առաջին միավորում, այլ՝ կա՛մ այդ միավորի ողջ բովանդակությունը, կա՛մ այնտեղ ակնարկված երևույթը (երբեմն էլ՝

---

5 Մեջբերվող օրինակների ընդգծումները մերն են—Լ. Ն.։

6 Պրոֆ. Աշոտ Աբրահամյանի խորհրդով՝ այս տերմինը գործածում ենք վերոհիշյալ աշխատությունների (Ռե՛ռուսական և թե՛ հայկական) մեջ օգտագործված հարակցա-որոշչային տերմինի փոխարեն՝ նկատի ունենալով, որ այն ավելի ճիշտ է բնութագրում այդ կապակցության էությունը։

գործողությունը)[7]։ Օրինակ՝ «Տիկինը յուր ստացած տեղեկությունների մի մասը միայն պատմեց, և նամակի մեջ այղքանը միայն գրված պետք է լիներ» (ՐԵ, էջ 47)։ «Նախկին բարեկամները դուրս գնացին, և դա եղավ նրանց վերջին այցելությունը և վերջը բարեկամության» (Շ, էջ 405)։ «— Դիմիր, ուր որ ուզում ես,— պատասխանեց Սմբատը վճռաբար.— ես այդ կտակը համարում եմ կեղծ, և հորինողը Իսահակ Մարութխանյանն է» (Ն. տ., էջ 71)։

գ) Հարակցա-հետևանքային—Բարդ համադասական նախադասության՝ և շաղկապով կապակցվող բաղադրիչներից առաջինով ներկայացվում է որևէ իրողություն, իսկ երկրորդով՝ նրան հարակից մի միտք, որը հետևանք է այդ իրողության։ Օրինակ՝ «Հարձակման գիշեր թե՛ ինքը և թե՛ յուր հայրը, որսորդության պատճառով, բացակա էին ամրոցից, և այդ նպաստեց նրանց թշնամու ձեռքը չընկնել» (ՐԵ, էջ 282)։ «Մ. Աբեղյանի, իբրև գիտնականի ու մտածողի, մյուս բնորոշ գիծն այն է, որ նա կանգնած չէր միևնույն մակարդակին, քարացած հայացքների տեր մտածող չէր. նա աճում էր, զարգանում. և դա իր արտահայտությունն է գտել նրա գիտական ամբողջ գործունեության մեջ» (ՍՄ, № 3, 1965, էջ 66)։

Հարակցա-հետևանքային կապակցությունները տարբերվում են և շաղկապով բաղհյուսական հետևանքային կապակցություններից նրանով, որ եթե վերջիններում հետևանքն ու նրան նախորդող իրողությունը ներկայացվում են որպես մեկ բարդ իրավիճակի հավասար բաղադրամասեր և հավասար են նաև խոսողի վերաբերմունքի տեսակետից, նրանցից երկրորդն օրգանապես կապված է առաջինին, որպես ուղղակիորեն (շոշափելի) նրանից բխող հետևանք, ապա առաջիններում դրությունն այլ է. այդպիսի բարդ համադասական նախադասությունների մեջ կապակցվող միավորներից երկրորդով հաղորդվում է առաջինի բովանդակությանը միայն հարակից, լրացուցիչ միտք՝ նրանից բխող հետևանքային երանգով, որը առաջինին հավասար չէ ոչ միայն հաղորդման նպատակով, այլև բարդ իրավիճակի ներկայացման մեջ ունեցած իր դերով։ Փաստորեն նման բարդ համադասական նախադասությամբ ներկայացվող պարզ մտքերից երկրորդը ածանցյալ նշանակություն ունի։ Բացի այդ, հարակցվող միավորը հնչերանգային այնպիսի սերտ ձուլում չի ստանում, ինչպիսին հատուկ է բաղհյուսական կապակցության միավորներին. Այն ունենում է հնչերանգային որոշ առանձնացվածություն։

Համեմատենք բաղհյուսական հետևանքային հետևյալ կապակցությունը.

Թաղեցին նրան այս հողում ահա,
Եվ հողը դարձավ պարարտ ու բերրի...

(ԳԱՀ, էջ 108)

դ) Հարակցա-վերաբերմունքային—Հաճախ բարդ համադասական նախադասության մեջ և շաղկապով կապակցվում են այնպիսի միավորներ, որոնցից առաջինով ներկայացվում է որևէ գործողություն, եղելություն, իրավիճակ, իսկ երկրորդով՝ խոսողի (կամ այն անձի, որի մասին խոսվում է առաջին միավորում) վերաբերմունքը (կարծիք, ցանկություն, գնահատում) առաջին

---

[7] Ցուցական դերանունն այս դերն ունի նաև ստորև քննվող իմաստային այլ հարաբերություններով հարակցական կապակցություններում։

միավորի բովանդակության նկատմամբ՝ հարակցական նշանակությամբ։ Այսպիսի կապակցությունը մենք անվանում ենք հարակցա-վերաբերմունքա-յին։

Վերաբերմունքն արտահայտվում է կա՛մ վերաբերմունքային բառերի գործածությամբ երկրորդ միավորում, կա՛մ վերջինիս ողջ բովանդակությամբ։ Օրինակ՝ «Փչացած մի երիտասարդ արտասվում է, և դա վատ նշան չէ» (Շ, 3. էջ 206)։

Ի՞նչ,
Քեզ պաճում են ձեռքերի վրա՞,
Եվ դու ուրա՞խ ես...

(ԳԷԱՏ, էջ 143)

Եվ շաղկապով հարակցական կապակցությունները բարդ համադասական նախադասություններում ունենում են կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները. կապակցությունը սովորաբար լինում է երկանդամ, և հարակցվող միավորը միշտ դրվում է երկրորդ տեղում (տե՛ս վերևի օրինակները)։ Հարակցվող միավորը «հազվադեպ կարող է շարադասվել առաջին նախադասության մեջ իբրև միջանկյալ նախադասություն. համեմատիր՝ Մի հանգամանք, որի մեջ խառն էր, և նա ինքն էլ չէր թաքցնում, Մազութի Համոյի մատը» (Ջ, էջ 295)[8]։

Հարակցությամբ կապակցվող միավորները լինում են թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասություններ։ Երբ երկրորդ միավորը լինում է բարդ ստորադասական նախադասություն, և երկրորդական նախադասությունն ունենում է առաջադաս շարադասություն (անմիջապես հաջորդում է առաջին միավորին), հարակցվողը լինում է ոչ թե միայն երկրորդական նախադասությունը, այլ ողջ բարդ ստորադասական նախադասությունը։ Այն կարտահայտվի այսպիսի գծապատկերով.



Օրինակ՝ «—...ինչո՞վ կարող ենք օգտակար լինել մենք հնգամյակի աշխատանքներին։— Ամենաառաջինը լավ սովորելով։ Մենք ունենք մասնագետների խիստ կարիք, և եթե դուք դառնաք լավ մասնագետներ, ապա դա կլինի ամենամեծ օգնությունը» (ՊԿ, 23. VIII. 1973)։

Իսկ եթե բարդ ստորադասական նախադասությունը առաջին միավորն է, և երկրորդական նախադասությունն ունի վերջադաս շարադասություն, որին և անմիջապես հաջորդում է հարակցվող միավորը, ապա երկրորդ միավորը հարակցական հարաբերության մեջ է լինում ոչ թե միայն երկրորդա-

8 Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 355։

կան նախադասության, այլ ողջ բարդ ստորադասական նախադասության հետ։ Գծապատկերը կլինի այսպես.



Օրինակ՝ «...դա այնպիսի կողոպուտ էր, որի դեմ աշխատավոր մարդը չէր կարող չըմբոստանալ, և Զեյթունը մերժեց ագահ տիրակալի պահանջը (ՍԴ, 10. VI. 1970)։

Եվ շաղկապով հարակցությամբ կապակցվող միավորում սովորաբար գործածվում է ցուցական դերանուն, որով, ինչպես ասվեց, ակնարկվում է կա՛մ ողջ առաջին միավորի բովանդակությունը, կա՛մ նրանում արտահայտված որևէ առարկա։ Հաճախ այդ ցուցականի հետ բառակապակցություն է կազմում առաջին միավորից «պոկված» որևէ բառ կամ բառակապակցություն, որին վերաբերում է հարակցվող միտքը։ Երբեմն հարակցվող միավորում կրկնվում է այն բառը կամ բառակապակցությունը, որին հարակից հաղորդում է այդ միավորի միտքը. որոշ դեպքերում էլ դրանց փոխարեն գործածվում է հոմանիշ մեկ այլ բառ կամ բառակապակցություն, կամ էլ այնպիսի բառակապակցություն, որը ակնարկում է առաջին միավորի ողջ բովանդակությունը։ Հիշյալները նույնպես կարող են ուղեկցվել այդ ցուցականով։ Երբեմն էլ վերը թվարկվածներից ոչ մեկը չի գործածվում երկրորդ միավորում։ Նման դեպքերում նրա ողջ բովանդակությունից ու հնչերանգից է հասկացվում, որ նրանով հաղորդվողը հարակից միտք է։

Օրինակ՝ «Լենոնը Լիպարիտից մեծ էր երկու տարով, և դա նրան հնարավորություն էր տվել մասնակցելու քաղաքացիական կռիվներին» (ՆՁ, էջ 84)։ «Հասարթյանին գրեթե չէին խոսեցնում, և սա նույնիսկ գոհ էր դրանից» (ՍԽ, էջ 279)։ «Իջևանի շրջանում ինտերնացիոնալ բարեկամության կամուրջը հաստատ է գցված, և թող բանուկ լինի այն ընդմիշտ» (ՍԴ, 21. X. 1970)։ «Աշուն է, և աշունը երփներանգել է անտառներով ծածկված սարալանջերը» (Ա, 12. VIII. 1973)։ «Բանվորները որոշեցին այդ չուգունից Վ. Ի. Լենինի արձանը ձուլել։ Տեղացի վարպետներից ինչ-որ մեկը կավից ծեփել էր արձանը, և հենց այդ արձանն էլ ձուլել տվեցին» (Գ, № 3, 1971, էջ 21)։ «Այսպիսի ցենտրիֆուգների օգնությամբ հեշտությամբ կարելի է բջջի բաղադրիչ մասերը իրարից անջատել, և այս շատ արժեքավոր մեթոդը հնարավորություն է տալիս առանձին ուսումնասիրելու բջջի յուրաքանչյուր մասի հատկությունները» (Կ, էջ 137)։ «Ոչ մի կերպ խոսակցությունը չէր ստացվում, և բոլորիս համար էլ շատ անտանելի էր [այդ]» (ԿՊ, էջ 207)։ «Ոլորապտույտ կածանով մենք բարձրանում էինք, և մեր ոտներից ելնող փոշին ոչ թե սպիտակ էր, այլ արեվագույն» (ՍԱ, էջ 122)։

Վերջին օրինակում՝ հարակցվող միտքը վերաբերում է ոչ թե առաջին միավորի բովանդակությանը, այլ նրա հետևանքին, որը բացակայում է (մեր ոտներից փոշի էր բարձրանում)։

Բարդ համադասական նախադասության մեջ և շաղկապով հարակցությամբ կապակցվող միավորների ստորոգյալներն արտահայտվում են բայի թե՛ միևնույն և թե՛ տարբեր եղանակ-ժամանակային ձևերով. դա կախված է երկու միավորների բովանդակությունների իրական հարաբերություններից և որևէ նշանակություն չունի հարակցական հարաբերության արտահայտման համար։

Հարակցական հարաբերությամբ կապակցվող պարզ նախադասությունների ստորոգյալները գերազանցապես արտահայտվում են սահմանական եղանակի ներկա կամ անցյալի անկատար ժամանակային ձևերով (հատկապես՝ սովորության, մշտատևության, ընդհանրության նշանակություններով), քանի որ այդպիսի բարդ նախադասություններ օգտագործվում են մեծ մասամբ նկարագրությունների ժամանակ, բայց կարող են արտահայտվել նաև այլ ձևերով (տե՛ս վերևի օրինակները)։

Եվ շաղկապով հարակցական կապակցությունն օժտված է լինում ընդհանրապես հարակցական կապակցություններին հատուկ հնչերանգով. առաջին միավորն ունենում է հավասար բարձրացող-իջնող հնչերանգ, որին հետևում է բավականաչափ տևական դադար, որ կարելի է գրության մեջ արտահայտել միջակետով (սովորաբար արտահայտում են. ստորակետով), իսկ երկրորդ միավորը իրենից ներկայացնում է որոշ ինքնուրույնություն ունեցող միտք, որի պատճառով ստանում է հնչերանգային առանձնացվածություն։ Սա իր մեջ պարունակում է հաղորդման նպատակի առումով կենտրոնական նշանակություն ունեցող անդամ (կամ հատված), որն էլ կազմում է այդ միավորի հնչերանգային բարձրակետը։ Եվ որովհետև այդ անդամը կարող է ընկած լինել թե՛ նախադասության սկզբում, թե՛ նրա մյուս անդամների միջև և թե՛ վերջում, ապա նրա հնչերանգը միակերպ լինել չի կարող. այն մերթ շեշտակի բարձրացող-հավասար իջնող է («Վայրի թռչունները ֆերմայում սկսել էին ձու ածել, և դա նրանց առաջին պտուղն էր».— ՍԱ, էջ 260), մերթ՝ հավասար բարձրացող-շեշտակի իջնող («Մեր ծանոթությունը միանգամից փոխվեց մտերմության, և դրա պատճառը Տերյանն էր.— ԳԹ, 16. VII. 1971), մերթ՝ հավասար բարձրացող-իջնող («Տիզբոնում մի հավատարիմ մարդ է հարկավոր, և այդ մարդը դու պետք է լինես»։—Ռ, էջ 251)։ Բոլոր դեպքերում էլ վերջանում է նախադասության ավարտին հատուկ հնչերանգով։

Ու շաղկապով հարակցական կապակցություն— Ու շաղկապով հարակցական կապակցությունը բարդ համադասական նախադասություններում այնքան էլ տարածված չէ։ Դա բացատրվում է նրանով, որ ու շաղկապը կապակցում է ավելի սերտ միավորներ, իսկ հարակցական կապակցության մեջ. ընդհակառակն, մտնում են իմաստային ոչ այնքան սերտություն ունեցող միավորներ։

Ու շաղկապով հարակցական կապակցությունները ճիշտ և ճիշտ նույնական են եվ շաղկապով նման կապակցությունների հետ թե՛ կապակցվող միավորների իմաստային առնչումներով և թե՛ կառուցվածքային առանձնահատկություններով։

Ահա՛ օրինակներ.

Հարակցա-բնութագրական՝

Փարվանա արքան մի աղջիկ ուներ.
Ու ոչ մի որսկան դեռ իրան օրում

Էնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել՝
Իր որսն անելիս մըթին սարերում։

(Թ, 1, էջ 224)

Լրացուցիչ տեղեկության՝ *«Ծիծեռնակը բույն էր շինել մեր սրահի օճորքում։ Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը եռ գալի։ Ու նրա բույնը միշտ կպած էր մեր սրահի օճորքին» (Ն. տ., էջ 355)։*

Հարակցա-հետևանքային՝ *«Արծիվները գալիս են խեղճ աղջկան ուտում, ու էդ տխուր դեպքիցը որպես հիշատակ կուժն է մնում ծառի ծերին» (ՍԱ, էջ 169)։*

Որակման՝

Այդ օրը սուգ էր Մոսկովում,
Ու սուգը վառ էր...

(Չե, էջ 101)

Հարակցա-հավելման՝ *«...Իմաստուն են երազները, ու մորդ հոգին քու երջանկության համար է խոսում» (Թ, 2, էջ 340)։*

Իսկ շաղկապով հարակցական կապակցությունը — Հարակցական է իսկ *շաղկապով այնպիսի կապակցությունը, որի երկրորդ միավորով հաղորդվում է որևէ լրացուցիչ տեղեկություն առաջին միավորում հաղորդվածի կամ այն առարկայի վերաբերյալ, որի մասին խոսվել է առաջին միավորում։*

Այստեղ առհասարակ բացակայում է զուգահեռականությունը, որը հատուկ է իսկ *շաղկապով հանդիպադրական-հակադրական կապակցություններին. այսպիսի կապակցությամբ բարդ համադասական նախադասությունների բաղադրիչները չունեն գործողությունների զուգահեռ ընթացք, ինչպես նաև՝ բովանդակությունների «զուգահեռ կշիռ»։ Օրինակ՝ «Զյունազգաթ Կապույտջիղը շուք է արել Ն. Հանդի վրա, իսկ Հանդը գյուղ է առանց հանդի ու լայնարձակ դաշտերի» (Ա, 5. VI. 1971)։*

Թեև իսկ *շաղկապով՝ հարակցական կապակցություն ունեցող բարդ համադասական նախադասությունների բաղադրիչները չեն ունենում հավասար նշանակություն և միմյանց հետ հանդիպադրական-հակադրական հարաբերության մեջ չեն լինում, սակայն հաճախ երկրորդ բաղադրիչով տրվող լրացուցիչ տեղեկությունը հակադրական երանգավորում է ստանում առաջին բաղադրիչով հաղորդվածի նկատմամբ։ Այն արտահայտվում է կապակցվող պարզ նախադասությունների բայ ստորոգյալների տարբեր բնույթներով (եթե առաջին պարզ նախադասության ստորոգյալն արտահայտված է լինում բայի հաստատական խոնարհմամբ, ապա երկրորդինն արտահայտվում է ժխտական խոնարհմամբ, և ընդհակառակը) և այդ պարզ նախադասությունների ողջ բովանդակություններով կամ միայն վերջինով (ինչ խոսք՝ մյուս կողմից էլ* իսկ *շաղկապն է իր իմաստը հաղորդում)։ Օրինակ՝ «Շահյանը երբեք չէր սիրել մոր համբույրները, իսկ մայրն այդ կողմից շատ ջոջալ էր եղել դեպի նա» (ՆԴ, հ. 3, էջ 240)։ «Զնայելով որ Շահյանն ինքն էր Մինասյանին հրա-*

վիրել իր մոտ տեղափոխվելու, բայց և այնպես ընկերոջ ներկայությունն իրենց տանը շատ էլ հաճելի չէր նրա համար։ Նա սովոր էր միայնակեցությանը, իսկ ընկերոջ ներկայությունը ճնշող դրության մեջ էր դրել նրան» (Ն. տ., էջ 349)։

Երբեմն էլ իսկ շաղկապով հարակցվող միավորը լինում է լրացուցիչ բացատրություն՝ որպես առաջին միավորի բովանդակությունից բխող հետևություն՝ մի կողմից, և որպես միջոց կամ պայման առաջին միավորի գործողության համար՝ մյուս կողմից։ Օրինակ՝ «Նախքան շուկաներում ապրանքների իրացնելը և օգուտ ստանալը հարկավոր է դրանք արտադրել, իսկ արժեք ստեղծել կարելի է աշխատանքի՛ և միա՛յն աշխատանքի միջոցով» (Հ., էջ 105)։ «Ժամանակակից արդյունաբերության և տնտեսության բուռն զարգացումը հրամայաբար պահանջում է գիտության նվաճումների արագ ներդրում ու աշխատանքի նոր տիպի կազմակերպում ողջ լայնությամբ ու խորությամբ, իսկ դա չի կարող տեղի ունենալ առանց հաշվողական տեխնիկայի (Ա, 29. V. 1971)։

Իսկ շաղկապով հարակցական կապակցությունը բարդ համադասական նախադասություններում ունենում է կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները.

Կապակցվող միավորները գերազանցապես լինում են պարզ նախադասություններ, և հարակցվող միավորը միշտ դրվում է երկրորդ տեղում։ Երբեմն միավորներից մեկը լինում է բարդ ստորադասական նախադասություն։ Այդպես է նաև և շաղկապով հարակցական կապակցության դեպքում, բայց այս երկուսի միջև նկատվում է որոշ տարբերություն. եթե և շաղկապով կապակցվելիս՝ երկրորդ միավորի հարակցվող միտքը վերաբերում է առաջին տեղում գտնվող ողջ բարդ ստորադասական նախադասությանը, ապա իսկ շաղկապով կապակցվելիս՝ մտքով հարակցվում են անմիջապես շաղկապին «շփվող» մասերը, այսինքն՝ եթե բարդ ստորադասական նախադասությունն առաջին տեղում է, և երկրորդական նախադասությունն ունի վերջադաս շարադասություն, որին անմիջապես հաջորդում է իսկ շաղկապով ուղեկցվող միավորը, ապա վերջինիս՝ հարակից, լրացական միտքը վերաբերում է երկրորդական նախադասությանը։ Այն կարելի է ցույց տալ այսպիսի գծապատկերով.



Օրինակ՝ «Օրվա հերոսը Գարեգինն է, որովհետև Իվն է ցանկանում, իսկ Իվն այդ ժամանակ աշխարհի ամենաերջանի՛կ ու ամենամե՛ծ մարդն էր» (ԱԱ, էջ 115)։

Իսկ եթե բարդ ստորադասական նախադասությունը երկրորդ տեղում է, ապա հարակցվող միտքը հաղորդվում է ողջ բարդ ստորադասական նախա-

դասության միջոցով (ինչպես և շաղկապով կապակցության դեպքում), և կստացվի այսպիսի գծապատկեր.



Օրինակ՝ «Վերջին տասնամյակում մեր գրականությունը ծանր կորուստներ ունեցավ, իսկ գրողի աշխատանքը սովորական պաշտոն չէ, որ անմիջապես փոխարինվի մեկ ուրիշով» (ԳԹ, 4. VI. 1971)։

Իսկ շաղկապով հարակցությամբ կապակցվող միավորում ցուցական դերանվան գործածությունը սակավադեպ է։ Այնտեղ կրկնվում է այն առարկայի, երևույթի անունը (նույնությամբ կամ ձևափոխված), որի նկարագրությունն է տրվում հարակցվող միավորում, կամ էլ նրա փոխարեն գործածվում են հոմանիշ բառեր ու բառակապակցություններ։ Այսպես՝ «Պատերազմի տարիներին կոլտնտեսության նախագահն ու անփորձ բրիգադիրները միտանի պապիցս էին խորհուրդ հարցնում, թե որ հանդամասում ինչ ցանել և ինչպես մշակել այն. իսկ իմ միտանի պապը հինգ մատի պես գիտեր մեր գյուղի հանդը» (Ա, 5. VI. 1971)։ «Միքայելն ուշադրություն չէր դարձնում ճրդեհի վրա, իսկ ամեհի գազանը քանի գնում ուռչում էր ու մեծանում» (Շ, էջ 391)։

Երբեմն միայն հարակցվող միավորում օգտագործվում է ցուցական, որով ակնարկվում է առաջին միավորի բովանդակությունը կամ այն հատվածը, որի վերաբերյալ հարակից միտք է հաղորդվում, ինչպես՝

«...Դու կդժբախտանաս, իսկ ես այդ չեմ տեսնում» (Շ, էջ 333)։

Բարդ համադասական նախադասության մեջ իսկ շաղկապով հարակցությամբ կապակցվող միավորների ստորոգյալները գերազանցապես արտահայտվում են տարբեր եղանակ-ժամանակային ձևերով, բայց կարող են արտահայտվել նաև միևնույն ձևով։ Դա կախված է հարակցվող միավորի նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքից, խոսելու պահի և հաղորդվող գործողությունների ժամանակների հարաբերությունից և երբեմն միայն՝ երկու միավորների գործողությունների ժամանակային հարաբերությունից. այդ այն դեպքում, երբ հարակից հաղորդվող գործողությունը ժամանակով համընկնում է առաջին միավորի գործողության հետ (տե՛ս վերևի օրինակները)։

Իսկ շաղկապով հարակցական կապակցությամբ բարդ համադասական նախադասությունն օժտված է լինում յուրահատուկ հնչերանգով. երկու բաղադրիչներն էլ ունենում են պատմողական պարզ նախադասություններին հատուկ բարձրացող-իջնող հնչերանգ, սակայն առաջինը (որը հաղորդման նպատակի տեսակետից հիմնականն է համարվում) արտաբերվում է բարձր հնչեղությամբ, իսկ երկրորդը (որը հաղորդման նպատակի տեսակետից երկրորդական նշանակություն ունի) արտաբերվում է ցածր հնչեղությամբ։ Եր-

կու միավորների միջև դադարն այնքան ցայտուն է և տեսական, որ նախընտրելի է իսկ շաղկապից առաջ ոչ թե ստորակետ, այլ միջակետ դնել։

Երբեմն բարդ համադասական նախադասություններում հարակցական կապակցությունն իրացվում է մինչդեռ շաղկապի միջոցով։ Կապակցվող միավորներն ունենում են իմաստային նույն հարաբերություններն ու կառուցվածքային նույն առանձնահատկությունները, ինչ որ իսկ շաղկապով հարակցական կապակցության դեպքում։ Օրինակ՝ «Տեսուչները դեպքից-դեպք են հետաքրքրվել ուսման մեջ ետ մնացող երկտարեցի աշակերտների հետ տարվող աշխատանքներով, մինչդեռ քաղաքի դպրոցներում դասընթացը կրկնելու է թողվել 5 հազարից ավելի երեխա» (ՍԴ, 21. X. 1970)։

Բայց շաղկապով հարակցական կապակցություն — Բայց շաղկապով կապակցությունները բարդ համադասական նախադասություններում լինում են հիմնականում բաղադրիչների հակասման կամ սահմանափակման իմաստային հարաբերությամբ։ Բայց շատ հաճախ բարդ համադասական նախադասության բաղադրիչներն այդ շաղկապով կապակցվում են այնպիսի հարաբերությամբ, երբ նրանցից երկրորդի բովանդակությունը ոչ թե ծագում է առաջինի բովանդակությունից՝ որպես տրամաբանորեն նրանից բխող հետևության հակասող, «նրա առաջն առնող» (կամ նրա բովանդակությունը սահմանափակող) միտք, այլ այն հանդես է գալիս իբրև առաջինի բովանդակությունը այս կամ այն կողմից լրացնող, պարզաբանող, նրա (կամ նրա անդամներից մեկնումեկի) հետ որևէ կերպ առնչվող՝ հարակից միտք։ Համեմատենք ստորև բերվող նախադասությունները։

«Սիրտս լցվեց, բայց ես լաց չեղա» (Գ, 9, 1970, էջ 26), «Շատ արյունքրտինք թափեցին, բայց չկարողացան ժայռը շարժել տեղից» (ԿՀ, էջ 94), «Նա ուզում էր խոսել, բայց գրգռված Միքայելը չէր թույլ տալիս նրան՝ բերանն անգամ բանալու» (Շ, էջ 324) բարդ համադասական նախադասությունների միավորների միջև առկա է հակասման հարաբերություն՝ որոշ նրբերանգներով. առաջինում կա միայն հակասում, որի երկրորդ բաղադրիչով հաղորդվում է առաջին բաղադրիչի գործողությունից սպասված հետևության հակառակ միտք, երկրորդում՝ հակասում՝ որոշ սահմանափակումով (շատ արյուն-քրտինք թափեցին, բայց ոչ այն աստիճանի, որ ժայռը տեղից շարժվեր), երրորդում՝ դարձյալ հակասում, որտեղ երկրորդ բաղադրիչով խափանվում է առաջինի գործողությունը («նրա առաջն առնվում է»)։ Երեք բարդ նախադասությունների մեջ էլ երկրորդ բաղադրիչի բովանդակությունը բխում է առաջինի բովանդակությունից։ Մինչդեռ «Վաղ գարնան առավոտի ցրտից նրա մարմինը թեթևակի փշաքաղվել էր. բայց ի՞նչ դուրեկան սառնություն էր դա» (ՍԱ, էջ 16) բարդ համադասական նախադասության բաղադրիչների հարաբերությունը այդպիսին չէ, թեև նրանք նույնպես կապակցվել են հակասման հարաբերություն արտահայտող բայց շաղկապով։ Այստեղ երկրորդ միավորի բովանդակությունը չի բխում առաջինից որպես նրանից սպասվող հետևության հակառակ միտք, այլ այն մի լրացուցիչ, հարակից հաղորդում է առաջին միավորում խոսվածի նկատմամբ։

Բայց շաղկապով հարակցական կապակցություններն, այնուամենայնիվ, երբեմն «բեռնվում են» միավորների բովանդակությունների, այսպես կոչված, ներքին հակասման հարաբերությամբ. բարդ համադասական նախադասության առաջին միավորով հաղորդվում է մի միտք, հարակցվող միավորով՝

լրացուցիչ տեղեկություն տվող մեկ այլ միտք, որը ներքին հակասության մեջ է գտնվում առաջինի նկատմամբ։ Այսպիսի կապակցությունը զուրկ է հակասման հարաբերության դրսևորման այն միջոցներից, որոնք հատուկ են բայց շաղկապով հակասական կապակցություններին (միավորների տարբեր բնույթի խոնարհմամբ բայ ստորոգյալ ունենալ, հակասման հարաբերություն արտահայտող բառերի գործածություն)։ հարակցվող միավորի բովանդակությունն առաջինին հակասում է «այլաբանորեն կամ նշանակությամբ»[9]։ Օրինակ՝ «...ես հավանում եմ ձեր եղբոր հումորը, բայց... համը տանում է» (ՆԴ, 3, էջ 86)։ «...կսել ենք, որ մեզ պետք է տանես հեռավոր Սպահան։ Տար, բայց մենք չենք մոռանա մեր նոր հայրենիքը՝ Հայաստանը» (Ր Ե, էջ 475)։ «Իմ միակ ցանկությունն է՝ ցույց տալ մարդկանց եղբայրությունը։ Ընդհանրապես մարդիկ ամաչում են նման հայտարարություն անել. վախենում են ծիծաղելի երևալ, բայց դա ինձ չի անհանգստացնում» (ԳԹ, 17. VIII. 1973)։

Երբեմն ներքին հակասման հետ «շաղախվում են» այլ մասնակի հարաբերություններ՝ հարակցա-պատճառական, ինչպես՝ «Օգոստոս ամսին երկու թունելախորշում կատարվել է 150 մետր առաջանցում. վատ ենք աշխատել, բայց դժվարությունները շատ շատ են» (ՍԴ, 10. VI. 1970), հարակցա-հավելական, որտեղ խոսողը խիստ կարևորություն է տալիս հարակցվող միավորի բովանդակությանը, ինչպես՝ «Ոչ. նա շարժե՛, որ ես մեռնեմ նրա համար... նա, այո՛, դավաճանեց յուր հայրենիքին, բայց դավաճանեց և—ի՞նձ...» (Ր Ե, էջ 318), հարակցա-սահմանափակման կամ զիջման, ինչպես՝ «Բայց մտածում էր. այո՛, հայ կինը լուռ ու մունջ դիմանում է մարդու անառակություններին, բայց նա՛ էլ հողային էակ է, նա՛ էլ սիրտ ունի, արյուն ունի» (Շ, էջ 130) և այլն։

Հաճախ բայց շաղկապով հարակցվող միավորը լինում է հարցական նրանգի, որով (կամ որի պատասխանով) խոսողը ցանկանում է լրացուցիչ տեղեկություն ստանալ առաջին միավորով հաղորդվածի կամ նրանում ներկայացված առարկայի, հատկանիշի կամ գործողության մասին, կամ էլ նա մտորում է առաջին միավորի բովանդակության վերաբերյալ։ Օրինակ՝ «Իսկական մարդու բնակարաններ, բայց ի՞նչ հրաշքով են հասել նրանք այստեղ» (ՍԱ, էջ 174)։ «Այդ բոլորը ճիշտ է, Մանասար քեռի, բայց որտեղի՞ց գտնենք այդքան կեր» (ՍԽ, էջ 75)։

Ի տարբերություն և, իսկ շաղկապներով հարակցական կապակցությունների, բայց շաղկապով կապակցությունների մեջ հաճախ հարակցվող միավորը հաղորդման նպատակի տեսակետից ավելի «ծանրակշիռ է լինում», քան առաջին միավորը. խոսողը մի տեսակ թերի, քիչ է համարում առաջին միավորով հաղորդվածը և երկրորդով լրացնում է այդ «պակասը»՝ առավել կարևորություն տալով նրան։ Այսպիսով, հարակցվող միավորը ամբողջացնում է հաղորդվելիք ողջ միտքը. այնպես որ նրա բովանդակությունը թեև լրացուցի՛չ, բայց ամենևին էլ երկրորդական միտք չէ։ Այդ պատճառով էլ այն արտաբերվում է շեշտված առոգանությամբ։ Այսպես՝ «Թոզ ծլեն ու ծաղկեն երկու տոհմերի զավակները, բայց հարսանիքի հովանու տակ մենք պետք է անցկացնենք մեր քարավանը, մեր միության գործը» (ԱԻՕ, էջ 173)։ «Այդ

---

9 Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 334։

անկարելի է։ Չարիքը գուցե յուր ետևից տարել է սրտմտությամբ վառված Սևադային, բայց Սևադան ինքը այդ չարիքը չէ՞ր ստեղծիլ» (Մ. 3, էջ 118)։

Երբեմն հարակցվող միավորը ներկայացնում է մի հանկարծահաս միտք, որը միայն ինչ-որ աննշմարելի, հեռավոր կապ ունի առաջին միավորի բովանդակության հետ. խոսելու պահին մտքի թռիչք է կատարվում մի երևույթից մյուսը. ինչպես՝ «Ոչինչ, Տիգրանիկս, ոչինչ չկա, մի վախիր... բայց այսօր դու ուսումնարան չպիտի՞ գնաս» (ՆԴ, 1, էջ 315)։

Բայց շաղկապով հարակցական կապակցությունը բարդ համադասական նախադասություններում ունենում է կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները.

Բարդ համադասական նախադասություններում բայց շաղկապով հարակցական կապակցությունը, ինչպես բոլոր հարակցական կապակցությունները, լինում է երկբաղադրիչ, և հարակցվող միավորը դրվում է երկրորդ տեղում։ Կապակցվող միավորները դարձյալ գերազանցապես լինում են պարզ նախադասություններ (տե՛ս վերևի օրինակները), երբեմն նաև՝ բարդ նախադասություններ, որոնք դիտվում են իբրև մեկ ամբողջություն, և այդ ամբողջություններն են իմաստային հարաբերության մեջ մտնում միմյանց հետ։

Օրինակ՝ «Ախ, ինչո՞ւ ես այսպես գունատ եմ,— ասում էր նա տխուր նայելով իր դեմքին, բայց նա չգիտեր, որ այդ գունատությունն ավելի էր սազում նրա դեմքին, քան շատերի կարմրությունը» (ՆԴ, 1, էջ 316)։

Հարակից միավորում երբեմն կրկնվում է առաջին միավորի կազմի մեջ եղող որևէ բառ (նույնությամբ կամ ձևափոխված), որին վերաբերում է հարակցվող միտքը, երբեմն էլ գործածվում է ցուցական (կամ անձնական) դերանուն, որը ակնարկում է կամ առաջին միավորի ողջ բովանդակությունը, կամ էլ նրանում ներկայացված որևէ առարկա։ Հիշյալ բառերի գործածությունը երկրորդ միավորում՝ բոլոր դեպքերում պարտադիր չէ. այն կախված է հարակցվող միավորի բովանդակության սերտության աստիճանից։

Բարդ համադասական նախադասության մեջ բայց շաղկապով հարակցությամբ կապակցվող միավորների ստորոգյալներն արտահայտվում են բայի թե՛ միևնույն և թե՛ տարբեր եղանակա-ժամանակային ձևերով. դա կախված է առաջին միավորի ներկայացրած գործողության (եղելության, երևույթի) և հարակցվող միավորի գործողության միմյանց հետ առնչակցման ժամանակային հարաբերությունից, ինչպես նաև՝ խոսողի՝ հարակից միտքը ներկայացնելու նպատակից. այնպես որ այն որևէ որոշիչ դեր չունի կապակցվող միավորների հարաբերությունները (իմաստային կամ քերականական) արտահայտելու մեջ։ Խոնարհման բնույթով նույնպես բայ ստորոգյալները կարող են թե՛ նույնական լինել և թե՛ տարբեր, միայն թե տարբեր բնույթի լինելու դեպքում, ինչպես նշվեց վերը, միավորների ներքին հակասման հարաբերությունն ավելի զգալի է դառնում։

Բարդ համադասական նախադասության մեջ բայց շաղկապով հարակցական հարաբերությամբ կապակցվող միավորները ևս ունենում են հավասար բարձրացող-իջնող հնչերանգ, ինչպես իսկ շաղկապով նույնպիսի հարաբերությամբ կապակցվող միավորները։ Բայց, ի հակադրություն վերջինների, բայց շաղկապով կապակցվող միավորներից երկրորդը շատ հաճախ ավելի բարձր հնչեղությամբ է արտաբերվում, քան առաջինը։ Դա բխում է նրանից, որ եթե իսկ շաղկապով կապակցվող միավորներից առաջինն է հաղորդման

նպատակի տեսակետից կարևոր նշանակություն ունեցողը, ապա բայց շաղկապով կապակցության մեջ այդպիսի նշանակություն է ստանում երկրորդ միավորը, թեև այն հանդես է գալիս որպես լրացուցիչ հաղորդում։ Այլ կերպ ասած, բայց շաղկապով հարակցական կապակցությամբ բարդ նախադասության բովանդակությունը ճաղորդելուց առաջ խոսողը հատուկ նպատակ է ունենում հաղորդել ճենց երկրորդ միավորի բովանդակությունը, և այդ միտումով էլ նա նախապես առաջ է քաշում մի միտք (1-ին միավոր), որի հետ առնչակցվում է հաղորդման բուն նպատակը հանդիսացող միտքը (2-րդ, հարակցվող միավոր)։ Անգամ եթե հարակցվող մտքի հաղորդումը նպատակայի՛ն էլ չի լինում, այդ միտքը հետո՛ է առաջանում, որպես հանկարծահաս միտք, այդ դեպքում էլ դարձյալ այն կարևոր նշանակություն է ստանում։ Օրինակ՝ «Այդպես հեշտ է շամփրել գազանին, բայց քո քաջությունը նիզակը դուրս քաշելումը պիտի տեսնենք» (ԲԵ., 502)։ «Օգոստոս ամսին երկու թունելախորշում կատարվել է 150 մետր առաջանցում. վատ ենք աշխատել, բայց դժվարությունները շատ շատ են» (ՍԴ, 10. VI. 1970)։

Բայց շաղկապով հարակցությամբ կապակցվող միավորների ինքնուրույնությունն առավել որոշակի է. առաջարկվում է դրանք միմյանցից բաժանել միջակետով (ընտրված օրինակներում էլ հանդիպում ենք այդպիսի տրոհման)։

Բարդ համադասական նախադասության մեջ սակավ դեպքերում հարակցական կապակցությունն իրացվում է նաև բայց շաղկապին հոմանիշ սակայն և համա շաղկապներով, որոնցից առաջինը հատուկ է գրական բարձր ոճին, երկրորդը՝ բարբառներին։ Այդպիսի կապակցությունները ճիշտ և ճիշտ նույնական են բայց շաղկապով կապակցությունների հետ թե՛ կառուցվածքային առանձնահատկությունների և թե՛ կապակցվող միավորների իմաստային հարաբերությունների առումով։

Ահա՛ օրինակներ. «Բարձրահարկ շենքերը նոր տեսք կտան երիտասարդ քաղաքին, սակայն ձգձգվում է բարձրահարկ շենքերի կառուցումը» (Ա, 8. VI. 1971)։

... Առ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի գըլխիս հարմար։
Վարձիդ համար միամիսվ մընա,
Համա-համա շատ չուշանա։

(Թ. 1, էջ 195)

Էլ շաղկապով հարակցական կապակցություն—Բարդ նախադասություններում հարակցական կապակցությունն իրացվում է նաև էլ միավորիչ շաղկապով։ Այս դեպքում կապակցվող երկրորդ միավորով հարակցությամբ մի լրացուցիչ միտք է հաղորդվում առաջին միավորով հաղորդվածի նկատմամբ՝ սաստկական, հավելական նշանակություններով։

Սրանք կառուցվածքային որոշ առանձնահատկություններով տարբերվում են նախորդներից. երկրորդ միավորում անպայման օգտագործվում է առաջին միավորից «պոկված» որևէ բառ (նույնությամբ կամ ձևափոխված) կամ նրա հոմանիշը և դրվում է այդ միավորի սկզբին՝ դառնալով նրա հնչերանգային բարձրակետը։ Իսկ էլ շաղկապը՝ ի հակադրություն և, իսկ, բայց շաղ-

կապների՝ նույնանման կապակցություններում գրված դիրքի (նախադաս՝, շարադասվում է վերը նշված բառից հետո, արտասանությամբ ձուլվում է նրա հետ և ավելի ակնհայտ է դարձնում նրա շեշտվածությունը։ Օրինակ՝ «...Ամեն մի բուրժուա իր ֆանտազիան ունի, իմ ֆանտազիան էլ այս է պահանջում» (Շ, էջ 125)։ «Ի՞նչ եմ անում քո գանձն ու ոսկին, իմ ունեցածն էլ չգիտեմ որտեղ պահեմ» (Թ, 2, էջ 482)։

Երբեմն էլ շաղկապը բաղադրվում է այն ցուցականի հետ, և ստացված այն էլ բաղադրյալ շաղկապը (գեղարվեստական գրականության մեջ ավելի շատ գործածական է էն էլ բարբառային ձևը) հարակցական կապակցությանը հաղորդում է զիջական երանգ։ Այս դեպքում հարակցվող միավորում այլևս չի գործածվում առաջին միավորից որևէ բառ կամ բառակապակցություն, այլ դրանք (կամ ողջ առաջին պարզ նախադասության բովանդակությունը) ակնարկողը բաղադրյալ շաղկապի այն բաղադրիչն է, որի նյութական իմաստը հաճախ այն աստիճան է մթագնվում, որ դժվար է լինում նկատել։ Օրինակ՝ «Մենակ որսկան Կարոն էս սահմանն անցկացավ, էն էլ դրա համար իրեն պատիժն ստացավ դևերից» (ՍԱ, էջ 164)։ «Բայց ախր սա իսկական ադամանդ է,— վրդովվում էր Վերան,— սա արժե երեսունյոթ ռուբլի, Այն էլ դիպլոմով գնված» (ԿՊ, էջ 178)։

Էլ շաղկապով հարակցությամբ կապակցվող միավորների ստորոգյալներն արտահայտվում են բայի թե՛ միևնույն և թե՛ տարբեր եղանակ-ժամանակային ձևերով։

Ինչպես երևում է վերը շարադրվածից, բարդ համադասական նախադասություններում հարակցական կապակցությունն իրացվում է ինչպես բաղհյուսական, այնպես էլ ներհակական շաղկապներով, և բոլորի մեջ էլ երկրորդ միավորը կառուցվում է առաջին միավորի «հենքի վրա», այն լրացուցիչ, պարզաբանող, հարակից միտք է առաջին միավորով հաղորդվածի նկատմամբ։ Հարակցական կապակցությամբ բարդ համադասական նախադասություններում առաջանում է մտքի, ինչպես նաև՝ արտասանական ընթացքի «բեկվածություն», ստեղծվում է «ընդհատ» կառույցի կապակցություն։ Բայց, այնուամենայնիվ, տարբեր շաղկապներով կապակցություններ ցուցաբերում են որոշ յուրահատկություններ։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա—«Ավանգարդ», երիտասարդական թերթ։
ԱԱ—Աբիգ Ավագյան, Հարավային տենդ, Երևան, 1971։
ԱԲ—Ակսել Բակունց, Երկեր, հ. 1, Երևան, 1964։
ԱԻՕ—Մ. Արազի. Իսրայել Օրի, Երևան, 1959։
Գ—«Գարուն» ամսագիր։
ԳԷԱՏ—Գևորգ Էմին, Այս տարիքում, Երևան, 1968։
ԳԷՆ—Գևորգ Էմին, «Նորք», Երևան, 1946։
ԳԹ—«Գրական թերթ», շաբաթաթերթ։
ԳՍՀ—Գեղամ Սարյան, Հատընտիր, Երևան, 1951։
Թ—Հովհ. Թումանյան, Երկեր, հ. 1, 2, Երևան, 1958։
Կ—Ընդհանուր կենսաբանություն, դասագիրք միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար, Երևան, 1970։
ԿՀԼ—Ստ. Կուրտիկյան, Հայրենի լեգենդներ, Երևան, 1957։

ԿՊ—Ա. Ի. Կուպրին. Պատմվածքներ, Երևան, 1968։
Հ—Հասարակագիտություն, դասագիրք միջնակարգ դպրոցի ավարտական դասարանների համար, Երևան, 1967։
ՂՀ—Ա. Ղարիբյան, Հայոց լեզու, դասագիրք 5—7-րդ դասարանների համար, Երևան, 1964։
Մ—Մուրացան, Երկերի ժողովածու, 5 հատորով, հ. 3, Երևան, 1952։
ՆԴ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1968, հ. 3, Երևան, 1955։
ՆՋ—Նաիրի Զարյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 3, Երևան, 1963։
Ն. տ.—Նույն աեղում։
Շ—Շիրվանզադե, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 3, Երևան, 1959։
ՉԵ—Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955։
ՊԿ—«Պիոներ կանչ» թերթ։
ՍԱ—Վ. Անանյան, Սևանի ափին, Երևան, 1961։
ՍԴ—«Սովետական դպրոց», մանկավարժական թերթ։
ՍԽ—Սերո Խանզադյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967։
ՍՄ—«Սովետական մանկավարժ» ամսագիր։
ՐԵ—Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 7, Երևան, 1956։

ПРИСОЕДИНИТЕЛЬНАЯ СВЯЗЬ В СЛОЖНОСОЧИНЕННЫХ ПРЕДЛОЖЕНИЯХ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ЛИЗА НАЛБАНДЯН

Резюме

В системе сложносочиненных предложений особое место занимают такие сложные предложения, составные элементы которых объединяются присоединительными отношениями. Смысл второго элемента в таком сложносочиненном предложении «сплетается» лишь на «канве» первого элемента как дополняющий, изъясняющий, побочный, совокупный смысл. В присоединительных конструкциях составные элементы по своему содержанию не выступают как равноправные единицы и не имеют интонационного тождества. В таких конструкциях с помощью второго элемента обычно передается мысль, возникшая во время высказывания первого элемента, поэтому при таком смысловом соотношении составных элементов подобные сложные предложения более характерны для устной речи. Присоединительная связь осуществляется как с помощью соединительных, так и противительных союзов, однако конструкции, составленные с помощью разных союзов, проявляют своеобразные особенности. Присоединение может выступать в разных целях, откуда и вытекают оттенки смысловых отношений соединяющихся элементов (присоединительно-определительные, дополнительные сообщения, присоединительно-следственные, присоединительно-относительные, присоединительно-ограничительные и т. д.).